8. **Иноземцев В.Л.** Расколотая цивилизация. - М.: Academia; Наука, 1999.- 724 с.
9. **Hofstede G.** Cultures Consequences. Sage Publications. Second Edition. - L., 2001.
10. **Зарубина Н.** Социально-культурные основы хозяйства и предпринимательства.. - М.: Магистр, 1998.- 354 с.

Ս.Գ. ՄԱՆԹԱՇՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՈՏԻՎԱՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիտարկվում է աշխատանքի մոտիվացման միջմշակութային հայեցակարգը: Ուսումնասիրվում են մշակութային տարբեր նորմերը:

Առանցքային բառեր. անձնակազմի մոտիվացումը և խթանումը, կառավարում, մշակույթ, արժեքներ, պրակտիկա**:**

S.G. MANTASHYAN

THE PROBLEM OF MANAGING THE LABOUR MOTIVATION IN MODERN ORGANIZATIONS

The intercultural aspect of labour motivation, as well as the values of the post-industrial society are considered. Different cultural standards are studied.

Keywords**:** personnel motivation and stmulation of management, culture, values, practices.

ՀՏԴ 338.23:331.5

Ս.Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՀ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՎՐԱ

(Գյումրի)

Կատարվել է զբաղվածության ոլորտին առնչվող օրենսդրական դաշտի և զբաղվածության պետական ծառայության գործունեության ուսումնասիրություն, հետազոտվել են ոլորտում կատարված աշխատանքները, որոնց հիման վրա կատարվել են առաջարկություններ ոլորտի բարելավման համար:

Առանցքային բառեր. զբաղվածություն, աշխատաշուկա, գործազրկություն, աշխատուժի առաջարկ ու պահանջարկ, աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատում, զբաղվածության ծրագրեր:

Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում սկսեց ձևավորվել 1990-ական թվականների սկզբին, և ինչպես անցումային տնտեսություն ունեցող մյուս երկրներում, այնպես էլ մեր հանրապետությունում այն գտնվում է

ձևավորման ու կայացման փուլում: Աշխատանքի շուկայի ձևավորման վրա ազդող հիմնական խոչընդոտներն են ստվերային տնտեսության աննախադեպ մեծ մասշտաբները, մասնավորեցման և ապապետականացման բացասական հետևանքները, թաքնված գործազրկությունը, օրենսդրական և իրավական դաշտի անկատարությունը, համապատասխան ենթակառուցվածքների բացակայությունը կամ թերզարգացածությունը, աշխատուժի չկարգավորված միգրացիան:

Այդ տարիներին Հայաստանում ձևավորվեց սոցիալ-տնտեսական այնպիսի իրավիճակ, որը պահանջում էր արտադրության ու բնակչության կենսապայմանների անկումը կանխելու, ինչպես նաև վարչահրամայական տնտեսական համակարգը շուկայականով փոխարինելու նպատակով իրականացնել անհրաժեշտ բարեփոխումներ: ՀՀ Գերագույն խորհուրդը 27.12.1991թ.-ին ընդունեց «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքը: Դա գիտակցումն էր այն իրողության, որ ժողովրդավարության ուղին բռնած պետությունը կազմալուծված տնտեսության, սանձազերծված պատերազմի ու խորացող ազքատության պայմաններում անգամ պարտավոր է նպաստել անհատի աշխատելու իրավունքի իրացմանը և ճիշտ աշխատաշուկայի ձևավորմանը:

Աշխատուժի առաջարկի ու պահանջարկի դինամիկան, լինելով աշխատաշուկայի հիմնական բնութագրիչը, հիմնականում պայմանավորված է տնտեսության մեջ կատարվող գործընթացներով: Օրենքի ընդունման պահին տնտեսական անկայունությունը և աշխատաշուկայի պահանջարկի փոփոխությունը նպաստում էին գործազրկության աճին: Այդ իսկ պատճառով պետությունը ստիպված էր օբյեկտիվորեն վարելու զբաղվածության պասսիվ քաղաքականություն. հաշվառվում էին աշխատանք փնտրողներն ու գործազուրկները,վճարվում էին գործազրկության նպաստներ:Սակայն իրականացվում էր պետության համար չափազանց կարևոր գործունեություն. Հայաստանի Հանրապետությունում կատարվում էր աշխատաշուկայի և բնակչության զբաղվածության ընթացիկ իրավիճակն արտացոլող վիճակագրություն:

Երկրում ընթացող քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումները նոր մոտեցումներ, նոր գաղափարներ էին պահանջում բոլոր բնագավառներում: Զբաղվածությունը բացառություն լինել չէր կարող, հատկապես այն պատճառով, որ ոլորտի նպատակներն ու խնդիրները առանձնահատուկ են ու պահանջում են նույնպիսի վերաբերմունք: Խնդիր դրվեց ուսումնասիրել ու տեղայնացնել–ներդնել զբաղվածության եվրոպական ռազմավարությունը:

ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի թիվ 994-Ն որոշմամբ գործողության մեջ մտավ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը», որում զբաղվածության ոլորտի զարգացման ուղղությունները հստակ ներկայացված չէին [1]: Մեկ տարի տևած մասնագիտական ու հասարակական բազմաթիվ քննարկումները տվեցին ցանկալի արդյունք: 2004թ. օգոստոսի 5-ին ընդունվեց ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության 994-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» թիվ 1225ԺՆ որոշումը:

Փաստորեն հստակեցվեցին ոլորտի քաղաքականության մարտավարությունն ու ռազմավարությունը, նոր պահանջներ ու ուղղություններ նախանշվեցին ակտիվ ծրագրերի իրագործման համար, ներդրվեց գործազրկության դեպքում պարտադիր սոցիալական ապահովագրության սկզբունքը:

Սա նշանակում էր, որ անհրաժեշտ են նոր փոփոխություններ զբաղվածության ոլորտի օրենսդրության մեջ: 2005թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ ազգային ժողովը ընդունեց «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը:

Նոր օրենքը առավել հստակ էր ներկայացնում բնակչության զբաղվածության իրավական հիմքերը, զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, աշխատանքի և զբաղվածության ազատ ընտրության և գործազուրկների սոցիալական պաշտպանության պետական երաշխիքները, աշխատանք փնտրողների իրավունքներն ու պարտականությունները:

ՀՀ կառավարությունը 2012թ.նոյեմբերի 8-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարություն» որոշումը, որտեղ նշվեց, որ զբաղվածության քաղաքականությունը պետք է մշտապես ուղղված լինի մի կողմից՝ տնտեսության կայուն զարգացման համար անհրաժեշտ աշխատուժի ձևավորմանը, մյուս կողմից՝ աշխատուժի առաջարկի ներուժային և արդյունավետ իրացման համար պայմանների ապահովմանը [1]:

Զբաղվածության ռազմավարության մեջ ներկայացված են զբաղվածության քաղաքականության միջնաժամկետ (2013-2018թթ.) թիրախներն ու դրանց իրագործման լուծումները: Դիտարկված են զբաղվածության խթանման հնարավորությունները, տրված են դրանց ապաբևեռացման և համակարգման սկզբունքները, իրականացման մեխանիզմները, ռազմավարական բարեփոխումների ապահովման ֆինանսական գնահատականը:

Մեր երկրում իրականացվող բարեփոխումների առավել բարդ ու հակասական գործընթացի հիմնական ոլորտներից մեկն աշխատանքի շուկայի ձևավորումն է, որը խորքային փոփոխություններ առաջ բերեց զբաղվածության քաղաքականության համակարգում (նկ.):



Նկ. Զբաղվածության հիմնական ցուցանիշները

2013թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում բնակչության զբաղվածության խթանման տնտեսական ու կազմակերպական դրույթներն ու իրավական հիմքերը [2]:

Զբաղվածության պետական քաղաքականության նպատակը կայուն զբաղվածության ապահովմանը միտված պայմանների ստեղծումն է, որն իրականացվում է տնտեսության պետական կարգավորման և բնակչության սոցիալական պաշտպանության միջոցով:

Վերը նշված նպատակներին հասնելու համար նոր օրենքում ներդրվեցին այնպիսի նոր հասկացություններ, ինչպիսիք են կայուն զբաղվածություն, աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատում, զբաղվածության ապահովման անհատական ծրագիր և այլն:

Նոր օրենքով զբաղվածության ոլորտում ընդհանրապես վերացվեց նպաստների համակարգը՝ ֆինանսները ուղղելով զբաղվածության ոլորտում միայն ակտիվ ծրագրերի իրականացմանը:

Հայաստանյան աշխատաշուկայի համար լուրջ մարտահրավեր է նաև ոչ ֆորմալ զբաղվածությունը, որը հիմնականում կրում է պատահական բնույթ, հիմնված է ավելի շուտ անձնական և սոցիալական կապերի, քան պայմանագրային հարաբերությունների վրա: Այն սովորաբար ցածր վարձատրվող է, անկայուն

և լուրջ խնդիրներ է առաջ բերում նաև սոցիալական ապահովության իրավունքի իրացման, մասնավորապես՝ գործազրկության կամ հիվանդության դեպքում, կամ կենսաթոշակային իրավունքի իրացման տեսանկյունից [4]:

Իրական գործազրկության մակարդակը Հայաստանում զգալիորեն ավելի բարձր է, քան զբաղվածության պետական ծառայությունների կողմից գրանցված գործազրկյության մակարդակը: Չնայած աշխատանքի շուկայում դրական տեղաշարժերին, դեռևս պահպանվում է էական խզումը աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև:

Զբաղվածության ոլորտում ակտիվ միջամտության քաղաքականությունը կրում է աշխատանքի շուկայի գործունեության էական բարելավման ներուժ: Թեև զբաղվածության ծառայությունների՝ որպես զբաղվածության ոլորտում պետական քաղաքականություն իրականացնող մարմնի գործունեությունը կարևոր է, այնուամենայնիվ, Զբաղվածության պետական գործակալությունը ուղղակի ազդեցություն չունի ոչ աշխատուժի առաջարկի, ոչ էլ պահանջարկի վրա: Չնայած դրան, աշխատանքի շուկայի միջամտության, հատկապես ակտիվ միջամտության քաղաքականությունը կրում է հսկայական ներուժ աշխատաշուկայի բարելավման տեսանկյունից՝ աշխատուժի առաջարկի ավելացում (օրինակ, ուսուցման, վերապատրաստման տրամադրման միջոցով), աշխատուժի պահանջարկի աճ, ինչպես նաև աշխատաշուկայի մեխանիզմների կատարելագործում:

Զբաղվածության ոլորտում պետական քաղաքականությունը պետք է միտված լինի ոչ միայն օրենսդրական դաշտի բարելավմանը,այլ նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը, որի բացակայության դեպքում պետությունը պարտավոր է իր քաղաքացիներին տալ սոցիալական երաշխիքներ՝ գործազրկության նպաստի կամ չաշխատած ժամանակահատվածի համար փոխհատուցման տեսքով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղքատությաբ հաղթահարման ռազմավարական ծրագիր**.-Եր.,2003:
2. **Հայաստանի Հարապետության զբաղվածության 2013-2018թթ. Ռազմավարություն**.- ՀՀ կառավարության 2012 թ.նոյեմբերի 8-ի նիստի N 45 արձանագրային որոշում
3. «**Զբաղվածության մասին» ՀՀ օրենք**.-Եր.,2013:
4. **Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը Հայաստանում**.- Եվրոպական հանձնաժողովի 2011թ. զեկույց

С.С. АЛЕКСАНЯН

ВЛИЯНИЕ ГОСУДАРСТВЕННОЙ ПОЛИТИКИ ЗАНЯТОСТИ РА НА РЫНОК ТРУДА

Произведен анализ деятельности государственной службы занятости и законодательной базы, связанной со сферой занятости. Изучены работы, проведенные в этой области, на основе которых даны предложения по их совершенствованию.

Ключевые слова: занятость, рынок труда, безработица, предложение и спрос рабочей силы, оценка потребностей лиц, ищущих работу, программы занятости.

S.S. ALEKSANYAN

THE IMPACT OF THE RA STAE EMPLOYMENT POLICY ON THE LABOUR MARKET

A thorough study of the legislative framework and the state employment service activities related to the field of employment is carried out. The works implemented in that field are studied, based on which recommendations were given for the improvement.

Keywords: employment, labour-market, unemployment, labour supply and demand, assessing the needs of job seekers, employment program.

ՀՏԴ 1/14

Գ.Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԵՏՊՈԶԻՏԻՎԻԶՄՈՒՄ

(Կապան)

Դիտարկվում է գիտական տեսությունների փոխհարաբերություններում մրցակցող տեսությունների և ռացիոնալության չափանիշների ընտրության հարցը՝ հետպոզիտիվիզմի հիմնական ներկայացուցիչների շրջանում:

Առանցքային բառեր. գիտական տեսություն, հետպոզիտիվիզմ, ռացիոնալության սկզբունք, ֆալսիֆիկացիոնիզմ, հետազոտական ծրագիր, գիտական գիտելիք, ոչ գիտական գիտելիք:

Մրցակցող գիտական տեսությունների ընտրության չափանիշների (գիտության աճի) հիմնախնդիրը գիտության փիլիսոփայության կարևորագույն խնդրակարգերից է: